ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՆԱԴԵՐ ՋԱՖԱՐԻԲԱԼԱԼԵՄԻ

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՑ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՒԶԱԿԱՆ ԻՆՏԵԼԵԿՏԻ ՓՈԽԱԴԱՐՁ ԿԱՊԸ

ԺԹ.00.01- «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

Երևան-2014

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ռ.Հ. Պողոսյան

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍՆԵՐ՝ հոգեբանական գիտությունների դոկտոր,
Ա.Ս. Բերբերյան

հոգեբանական գիտությունների թեկնածու,
պրոֆեսոր Հ. Ա. Բաբայան

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝ Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2014 թ. հունիսի 17-ին, ժ. 12.00-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանին առընթեր գիտական աստիճաններ շնորհող ԲՈՀ-ի Փիլիսոփայության և հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի նիստում:
Հասցեն՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծ 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014թ. մայիսի 17-ին:

Փիլիսոփայության և հոգեբանության
064 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, հոգեբանական
գիտությունների թեկնածու, դոցենտ

Կ. Ե.Վարդանյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը
պայմանավորված է ժամանակակակից կյանքում ամուսնական կյանքին՝ զույգերի հարմարման և դրանից բավարարվածության հիմնախնդրի հոգեբանական կողմերի, դրա հիմքում ընկած հոգեբանական պատճառների, օրինաչափությունների, մեխանիզմների ուսումնասիրության անհրաժեշտությամբ, ամուսնաընտանեկան կյանքի դժվարությունների հոգեբանական ախտորոշման, նախազգուշացման և կանխարգելման նպատակով:

Ամուսնական կյանքին զույգերի հարմարման և բավարարվածության հիմնախնդրի ուսումնասիրությունները՝ Բեյկ, Քոյեն, Ռուֆ, Աքերման Քեյ, Ֆրիզ, Նենդա, Ջիորդանո և Մեգ Գլդերեյք, Շեմբերիս և Էրֆանոզ, Քարլսոնի , Ֆիշեր, Բեյկ, Հանթ, Վասմին, Ռաբել, Սփենս, Մորիս և Քարթեր, Գոլեման, Մայերս և Սալավեյ, Սքոտ, Մալոֆը, Ֆիթսմ և ուրիշներ թույլ են տալիս սահմանել այն որպես ամուսնական կյանքից ապրվող ուրախության, երջանկության և հաճույքի զգացողություն, որն արտահայտվում է փոխադարձ սիրո, հոգատարության, համերաշխության և փոխըմբռնման վիճակներով:

Ամուսնական կյանքին զույգերի հարմարումն ու բավարարվածությունը պայմանավորող հոգեբանական տարբեր գործոնների շարքում հետազոտվողների կողմից խիստ կարևորվում է զույգերի հուզական ինտելեկտի ուսումնասիրությունը՝ որպես ամուսնական կյանքին՝ զույգերի հոգեբանական հարմարումն ու բավարարվածությունը պայմանավորող անձնային հատկություն:

Հուզական ինտելեկտի վերաբերյալ հոգեբանական տարաբնույթ հետազոտությունները՝ Սալավեյ-Մայեր, Գոլման, Բար-Ան, Ռ. Թորնդայկի, Դ Վեքսլերի, Հ. Գարդների Ատկինսոն, Դ. Մաքքլելանդ, Ժ. Պիաժե, Ջեյմս Լանգե, Քենոն Բարդ, Կ. Իզարդ, Կելլերման-Պլուտչիկ և ուրիշներ թույլ են տալիս սահմանել այն, որպես հույզերի իմաստների, դրանց փոխհարաբերությունների ընկալման կարողություն, հույզերի վերաբերյալ տրամաբանելու և դրանց օգնությամբ պրոբլեմները լուծելու հմտություն: Հուզական ինտելեկտը մեկնաբանվում է որպես սեփական և այլոց զգացմունքներն ու հույզերը ճանաչելու, սեփական անձի և ուրիշների խթանման համար հույզերը կիրառելու, սեփական հույզերի ղեկավարման և ուրիշների հետ փոխհարաբերությունների կարգավորման հմտություն:

Հետազոտողները սերտ կապ են արձանագրվում մարդու հուզական ինտելեկտի և միջանձնային կառուցողական փոխհարաբերությունների, սոցիալական ու հուզական հարմարման, ինքնակառավարման, հաղորդակցական ընդունակությունների, ուրիշին հասկանալու կարողության, միջանձնային հարաբերությունները կառավարելու, կոնֆլիկտները հաղթահարելու նրա ընդունակությունների միջև:

Հետազոտողների մեծամասնության կարծիքով՝ ամուսնական կյանքին՝ զույգերի հարմարումը, բավարարվածությունն ու հուզական ինտելեկտը փոխներգործուն գործընթացներ են, իսկ հուզական ինտելեկտի զարգացվածությունը և դրան առնչվող

հմտությունների առկայությունը հաջողված ու համերաշխ ամուսնություն ձևավորման, ամուսնաընտանեկան փոխհարաբերությունների բարելավման գրավական է:

Այս տեսակետից խիստ արդիական է ամուսնական կյանքին զույգերի հարմարման և դրանից բավարարվածության հիմնախնդրի հոգեբանական կողմերի, դրա հիմքում ընկած հոգեբանական պատճառների, օրինաչափությունների, մեխանիզմների ուսումնասիրությունը, ամուսնաընտանեկան կյանքի դժվարությունների հոգեբանական ախտորոշման, նախազգուշացման և կանխարգելման նպատակով: Այս մտայնությամբ էլ ձևակերպվել է հետազոտության հիմնական վարկածը:

Հետազոտության վարկածը: Ենթադրվում է որ ամուսնական զույգերի հուզական ինտելեկտի զարգացվածության մակարդակը դրական համահարաբերակցության մեջ է ամուսնական կյանքին՝ նրանց հարմարման և բավարարվածության մակարդակի հետ, որպես ազդեցիկ գործոններ հանդիսանում են զույգերի և նրանց ծնողների կրթական մակարդակը, զույգերի սեռային պատկանելիությունը և տարիքը:

Հետազոտության օբյեկտը: Ամուսնական զույգերի հուզական ինտելեկտի դրսևորումներն են ամուսնական կյանքում:

Հետազոտության առարկան: Ամուսինների հուզական ինտելեկտի և ամուսնական կյանքին զույգերի հարմարվածության ու բավարարվածության կապեր են, և դրանց բնույթը:

Հետազոտության նպատակը: Բացահայտել ամուսինների հուզական ինտելեկտի և ամուսնական կյանքին՝ զույգերի հարմարվածության ու բավարարվածության միջև կապը, դրա բնույթը, հետազոտել ամուսինների, նրանց ծնողների կրթական մակարդակի, սեռային պատկանելիության և տարիքի ազդեցության գործառույթներն ամուսնական բավարարվածության և հարմարման գործում, հուզական ինտելեկտի խթանման միջոցով նպաստել ամուսնական կյանքին նրանց առավել հարմարվածությանն ու բավարարվածությանը:

Հետազոտության խնդիրները:

1. Հոգեբանական տարաբնույթ հայեցակարգերի վերլուծության հիման վրա բացահայտել “ամուսնական կյանքին՝ զույգերի հարմարումը և բավարարվածությունը” և “հուզական ինտելեկտ” հասկացությունների էությունն ու բովանդակությունը,
2. Վերոնշյալ հասկացությունների տեսական համադրման միջոցով ցույց տալ ամուսնական կյանքից բավարարվածության, զույգերի հարմարման և նրանց հուզական ինտելեկտի զարգացվածության մակարդակի միջև առկա փոխհարաբերությունները,
3. Փորձարարական հետազոտության միջոցով բացահայտել ամուսնական զույգերի հուզական ինտելեկտի մակարդակի, ամուսնական կյանքին՝ նրանց հարմարվածության ու բավարարվածության աստիճանի, զույգերի, նրանց ծնողների կրթական մակարդակի և սեռային պատկանելիության միջև առկա փոխադարձ կապերն ու հարաբերությունները:
4. Ձևավորող գիտափորձի միջոցով խթանել և զարգացնել հետազոտվողների հուզական ինտելեկտը, դրանով նպաստելով ամուսնական կյանքին նրանց առավել հարմարվածությանն ու բավարարվածությանը:

Հետազոտության մեթոդաբանական հիմքն են կազմում փիլիսոփայական իմացաբանությունն ու արտացոլման տեսությունը և դրա հիման վրա ձևակերպված հոգեբանության հիմնական սկզբունքները, հուզական ինտելեկտի վերաբերյալ՝ Սալավեյ-Մայերի, Գոլմանի, Բար-Անի, Ռ. Թորնդայկի, Դ Վեքսլերի, Հ. Գարդների, տեսությունները, հույզերի վերաբեյալ՝ Ջեյմս Լանգեի, Քենոն Բարդի, Զ. Ֆրոյդի, Հ. Սելյեի, Կ. Իզարդի, Կելլերման-Պլուտչիկի տեսությունները, մոտիվացիայի վերաբերյալ Ատկինսոնի, Դ. Մաքքլելանդի տեսությունները, ամուսնական կյանքին զույգերի հարմարման և բավարարվածության վերաբերյալ Քարլտոնի, Հ. Ֆիշերի, Հանթի, Բերիանտի և Էլդերի, Վալենշտայնի և Բելքսերի Սքոթի և Մալոֆի հետազոտությունների տեսական դրույթները:

Հետազոտության մեթոդները:

Հետազոտության ընթացքում կիրառվել են ա) Բար-Անի հուզական ինտելեկտի հարցարանը, բ) ամուսնական բավարարվածության Էնրիչի հարցարանը, գ) Հարմոհան Սինգի ամուսնության համապատասխանության հարցարանը, դ) դիտման և հարցազրույցի մեթոդները, ե) հուզական ինտելեկտի զարգացման մեթոդիկան: Տվյալների երկրորդային վերլուծությունը իրականացվել է մաթեմատիկական վիճակագրական մեթոդների՝ համահարաբերակցական վերլուծություն, ռեգրեսիոն մեթոդի կիրառությամբ: Վերը նշված վիճակագրական փորձարկումները կատարվել են համակարգչային SPSS ծրագրի միջոցով:

Հետազոտության ընտրախումբը, կազմակերպումն ու ընթացքը:

Ուսումնասիրվել են Իրանի իսլամական հանրապետության Մազանդարան նահանգի բուհերի թվով 217 ամուսնացած ուսանողներ, 109 արական և 108 իգական սեռի: Հետազոտվողների տարիքը. 67 մարդ (31%) 18-22տ., 62 մարդ (29%)՝ 23-27 տ., 23 (11%) մարդ՝ 28-32 տ., 16 մարդ (7%)՝ 33-37տ., 49 մարդ (23%)՝ 38 և բարձր տարիքի: Հետազոտվողների կրթական աստիճանը. 132 մարդ՝ հետազոտվողների 61%-ը բակալավրիատի ուսանողներ են, 52 մարդ, այսինքն՝ հետազոտվողների 24%-ը մագիստրոսներ, 33 մարդ, հետազոտվողների 15%-ը՝ ասպիրանտներ: Ընտրանքը կատարվել է բազմափուլ կլաստերային նմուշ-առման մեթոդով:

Հետազոտության հիմնական փուլերը:

Առաջին փուլում ձևակերպվել և տեսականորեն հիմնավորվել է վարկածը, իրականացվել է վարկածի բովանդակությունը կազմող հասկացությունների հոգեբանական վերլուծությունը, հստակեցվել դրանց ուսումնասիրության հիմնական չափորոշիչները, ձևակերպվել են հետազոտոթյան նպատակն ու խնդիրները, ընտրվել են հետազոտության համապատասխան մեթոդները: Երկրորդ փուլում իրականացվել է բուն հետազոտությունը, որին հաջորդել են տվյալների ամփոփումն ու արդյունքների հոգեբանական վերլուծությունը: Երրորդ փուլում իրականացվել է ձևավորող գիտափորձ /ուսումնական թրեյնինգ/, որի նպատակն է բարձրացնել հետազոտվողների հուզական ինտելեկտի մակարդակը:

Հետազոտության գիտական նորույթը:

Հետազոտության շրջանակում առաջին անգամ հուզական ինտելեկտը վերլուծվել է ամուսնական բավարարվածության և հարմարման հետ ունեցած հարաբերակցության տեսանկյունից: Քննելով այս փոփոխականների փոխադարձ ազդեցությունները՝ հետազոտությունն առավել ընգրկուն և համակողմանի մոտեցում է ցուցաբերում հուզական ինտելեկտի և ամուսինների փոխհարաբերությունների հարցերին, քանի որ այդ փոփոխականների համատեղ դիտարկմամբ հստակ սահմանվում է ամուսնական փոխհարաբերությունների վրա ազդող տարբեր գործոնները: Հետազոտության նորույթ է ժողովրդագրական գործոնների (սեռ, տարիք, փորձարկվողների և նրանց ծնողների կրթության մակարդակ) ազդեցության ուսումնասիրությունը ուսանողների հուզական ինտելեկտի, ամուսնական բավարվածության և հարմարման վրա, որով առավել ամբողջացվում ու կատարելագործվում են այլ հեղինակների նախորդ ուսումնասիրությունների արդյունքները:

Հետազոտության տեսական նշանակությունը:

Տեսական իմաստով հետազոտությունը հիմնավորում է հուզական ինտելեկտի դերն ու նշանակությունը ամուսնական կյանքից բավարարվածության և դրան առավել հարմարվածության գործընթացում և բացատրում է, թե ամուսնական կյանքի բավարարվածության և հարմարման գործընթացում ինչպիսի դերակատարություն ունեն հուզազգացական ունակությունները և հուզական ինտելեկտը ինչպես է պայմանավորում ամուսնական կյանքի արդյունավետությունը:

Հետազոտության գործնական նշանակությունը:

Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել հոգեբանների, ընտանեկան և ամուսնական հարցերով զբաղվող թերապևտների և խորհրդատուների, սոցիալական աջակցման աշխատողների, ամուսնալուծությունների կանխարգելման կենտրոնների կողմից: Հետազոտության արդյունքները կարող են ներդրվել ընտանեկան և ամուսնական թերապևտիկ ծրագրերում և ուսուցման դասընթացներում՝ նպաստելով ամուսնական փոխհարաբերությունների բարելավման և ամուսնալուծությունների կանխման գործին:

Պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

1. Ամուսնական բավարարվածության հասնելը շարունակական և բազմակողմ գործընթաց է և այն իր առանձնահատուկ տեղն ու դերն ունի հուզական ինտելեկտի հիման վրա ձևավորվող միջանձնային հարաբերություններում: Սեփական անձի և ուրիշների ըմբռնումը, իր և ուրիշների հույզերի ճանաչումն ու կառավարումը մեծ մասամբ պայմանավորված է մարդկանց խելամիտ վարքով: Հուզական ինտելեկտի խթանումն ու զարգացումը նպաստում է սեփական և այլոց հույզերի առավել հստակ ճանաչմանը, կառավարմանն ու կարգավորմանը, ինքնախթանմանը և միջանձնային փոխհարաբերությունների բարելավմանը:
2. Հուզական ինտելեկտի զարգացումը մեծացնում ու բարելավում է ամուսինների հուզազգացական կարողությունները, բարդ իրավիճակների հաղթահարման, զայրույթի կառավարման և միջավայրի ճնշումների ու կտրուկ

փոփոխությունների դիմագրավման ունակությունները: Հուզական ինտելեկտի խթանումն օգնում է ամուսնաընտանեկան կոնֆլիկտների առավել արդյունավետ լուծմանը, հետևաբար բարձրացնում ամուսնական կյանքից ունեցած բավարարվածության զգացողությունը:

3. Կրթության մակարդակն ազդում է ամուսնական կյանքին հարմարման և ամուսնական բավարվածության վրա:
4. Հուզական ինտելեկտը փոխկապակցված է ամուսնական հարմարման և ամուսնական բավարարվածության հետ, հուզական ինտելեկտը կարող է նաև կանխատեսել նշված փոփոխականները:
5. Սեռային պատկանելիությունն ազդեցիկ գործոն է հուզական ինտելեկտի և ամուսնական հարամարման գործընթացում: Հուզական ինտելեկտի մակարդակը տարբեր է կանանց և տղամարդկանց մոտ:

Ատենախոսության փորձաքննությունը և հրապարակումները:

Ատենախոսության հիմնական դրույթները և ուսումնասիրության արդյունքները զեկուցվել ու քննարկվել են Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հոգեբանության տեսության և պատմության, տարիքային և մանկավարժական հոգեբանության ամբիոններում: Ատենախոսության հիմնադրույթները ներկայացված են հեղինակի կողմից հրատարակված 3 գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության ընդհանուր ծավալը՝ առանց հավելվածների 165 էջ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **<u>ներածական մասում</u>** հիմնավորված է թեմայի արդիականությունը, առաջադրված է հետազոտության գիտական վարկածը, ձևակերպված են նպատակն ու խնդիրները, տեսամեթոդաբանական հիմքերն ու հետազոտության մեթոդները: Ներկայացված են հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, աշխատանքի գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության **<u>առաջին գլուխը</u>**՝ վերնագրված “Ամուսնական կյանքին՝ զույգերի հոգեբանական հարմարումն ու բավարարվածությունը որպես հոգեբանական ուսումնասիրության հիմնահարց” նվիրված է հոգեբանական տարբեր տեսություններում ամուսնական կյանքին՝ զույգերի հոգեբանական հարմարման ու բավարարվածության հիմնահարցի քննարկմանը, այդ գործում զույգերի անձնային /հոգեկան/ հատկությունների նշանակության ուսումնասիրությանը:

Հիմնախնդրի վերաբերյալ տարաբնույթ հոգեբանական հետազոտությունների՝ Բեյկ, Քոյեն և ուրիշներ, Ռուֆ, Ռուֆ, Աքերման Քեյ, Նենդա, Ջիորդանո և Մեգ Գլդերեյք, Շեմբերիս և Էրֆանոզ, Քարլսոնի , Ֆրիզ, Ֆիշեր, Բեյկ, Հանթ, Վասմին, Ռաբել, Սփենս, Մորիս և Քարթեր, Գոլեման, Մայերս և Սալավեյ, Սքոտ, Մալոֆը, Ֆիթս և ուրիշներ վերլուծության արդյունքում բացահայտվում է “ամուսնաընտանեկան կյանքին՝ զույգերի հարմարվածության” և “ամուսնական կյանքից բավարարվածության” հասկացությունների հոգեբանական բովանդակությունը, դրա հիմքում ընկած օրինաչափությունները, դրա վրա ազդող հոգեբանական գործոններն ու պայմանները:

Իրականացվում է վերոնշյալ երկու հասկացությունների համեմատական վերլուծություն, որի արդյունքում եզրակացություն է արվում այն մասին, որ համատեղ կյանքից ունեցած գոհունակությունը և բավարարվածությունը մշտապես վկայում է ամուսնական հարմարման մասին, միաժամանակ ամուսնական կյանքին հարմարումը ոչ միշտ է վկայում ամուսնական կյանքից բավարարվածության և երջանկության մասին:

Ամուսնական բավարարվածությունը սահմանվում է որպես ամուսնական կյանքից ապրվող ուրախության, երջանկության և հաճույքի զգացողությունն է, որի դեպքում ամուսինների բավարարված փոխհարաբերություններն արտահայտվում են փոխադարձ սիրով, հոգատարությամբ, համերաշխությամբ և փոխըմբռնմամբ:

Առանձնացվում են ամուսնական բավարարվածությունը պայմանավորող մի շարք համընդհանուր գործոններ, որոնք են զույգերի կրթության մակարդակը, սոցիալ-տնտեսական կարգավիճակը, ընդհանուր հետաքրքրությունները, զույգերի ինտելեկտն ու անհատականություն, ընտանիքի կյանքի պտույտի սկզբնական և ավարտական փուլերը, սեռական համապատասխանությունը, ուշ ամուսնությունը և այլն: Տեսական վերլուծության են ենթարկվում ամուսնական կյանքին հարմարման և բավարարվածության գործում զույգերի անձնային /հոգեկան/ հատկությունների դերն ու գործառույթները:

Հուզական ինտելեկտը դիտարկվում է որպես ամուսնական կյանքին՝ զույգերի հոգեբանական հարմարումն ու բավարարվածությունը պայմանավորող կարևոր անձնային հատկություն: Կարևորվում է հուզական հմտությունների և կարողությունների՝ հույզերի համարժեք ընկալման, արտահայտման ու ճանաչման, դրանց կառավարման դերը ամուսնական կյանքին՝ զույգերի հարմարման և բավարար-վածության գործում:

Ատենախոսության <u>**երկրորդ գլուխը**</u>՝ վերնագրված՝ “Հուզական ինտելեկտի դերը ամուսնական կյանքին՝ զույգերի հոգեբանական հարմարման և բավարարվության գործում” նվիրված է “հուզական ինտելեկտ” հասկացության հոգեբանական բովանդակության բացահայտմանը, դրա սահմանմանը, հիմնական ամուսնական կյանքին՝ զույգերի հարմարման և բավարարվածության գործում դրա գործառույթների ուսումնասիրությանը:

Դրա շրջանակում հուզական ինտելեկտի, հույզերի և մոտիվացիայի վերաբերյալ հիմնական հոգեբանական հայեցակարգերի ու մոտեցումների՝ Սալավեյ-Մայեր, Գոլ-

ման, Բար-Ան, Ջեյմս Լանգե, Քենոն Բարդ, Զ. Ֆրոյդ, Հ. Սելյե, Կ. Իզարդ, Կելլերման-Պլուտչիկ, Ատկինսոն, Դ. Մաքքլելանդ, Ռ. Թորնդայկ, Դ Վեքսլեր, Հ. Գարդներ վերլուծության ճանապարհով բացահայտվում է հուզական ինտելեկտ” հասկացության հոգեբանական բովանդակությունը, հոգեֆիզիոլոգիական հիմքերը, տրվում է դրա սահմանումը, ներկայացվում են հիմնական գործառույթները անձի կենսագործունեության տարբեր ոլորտներին նրա հաջող հարմարման գործում, ուսումնասիրվում է հուզական ինտելեկտի ձևավորումը մարդու հոգեկան օնտեգենետիկ զարգացման ընթացքում, Ճանաչողական և հուզական ինտելեկտի հարաբերակցությունը վարքի մեջ:

Հուզական ինտելեկտը սահմանվում է որպես հույզերի իմաստների, դրանց փոխհարաբերությունների ընկալման կարողություն, ինքն իրեն և ուրիշներին ճանաչելու և կառավարելու, սեփական անձի և ուրիշների խթանման համար հույզերը կիրառելու, սեփական հույզերի ղեկավարման և ուրիշների հետ փոխհարաբերությունների կարգավորման, հմտություն:

Առանձնացվում է հուզական ինտելեկտի հետազոտության ժամանակագրական երեք հաջորդական փուլեր, երբ ինտելեկտն ու հույզերը ուսումնասիրվում են առանձին, ապա ուսումնասիրվում է դրանց փոխադարձ կապը, իսկ երրորդ փուլում շրջանառության մեջ է դրվում “հուզական ինտելեկտ” հասկացությունը, առանձնացվում են հուզական ինտելեկտի անձնային, սոցիալական գործառույթները:

Ամուսնական կյանքին՝ զույգերի հարմարումը, բավարարվածությունն ու հուզական ինտելեկտը դիտարկվում են որպես փոխներգործուն գործընթացներ: Ապացուցվում է, որ հուզական ինտելեկտի բարձր մակարդակը և դրան առնչվող հմտությունների առկայությունը հաջողված ու համերաշխ ամուսնություն ձևավորման, ամուսնաընտանեկան փոխհարաբերությունների բարելավման գրավական է:

Հուզական ինտելեկտը դիտարկվում է որպես յուրացվող և ժամանակի ընթացքում անհատականացվող երևույթ է, որը ճիշտ զարգացում ունենալու դեպքում կարող է դրական ազդեցություն թողնել ամուսնական կյանքի վրա: Հուզական ինտելեկտի բաղադրիչները դիտարկվում են մշտապես փոփոխվող և զարգացող ընթացքի մեջ, որպես տարբեր փորձերի արդյունքում կատարելագործվող հոգեկան հատկություններ:

Ուսումնասիրվում է ծնող-երեխա ադյունավետ փոխհարաբերությունների, հուզազգացական ապահով միջավայր ստեղծելու միջոցով հուզական ինտելեկտի ձևավորման հնարավորությունները, որի դեպքում երեխան ձեռք է բերում կարողություն ազատ և անկաշկանդ կիսել ծնողների հետ իր հույզերը, խոսել դրանց մասին, սովորել ճանաչել սեփական հույզերը և դրանք կոչել իրենց անուններով:

Կարևորվում է հանրակրթական դպրոցներում և բուհական կրթության մեջ հուզական ինտելեկտի ուսուցման ու խթանման դասընթացների և ծրագրերի ներառումը, ինչը կնպաստի պատանիների և երիտասարդների հուզական ինտելեկտի խորացմանը և կկանխարգելի ապագա ընտանեկան կոնֆլիկտներն ու ամուսնալուծությունները:

Հուզական ինտելեկտը դիտարկվում է որպես ամուսնական կյանքին հարմարման և ամուսնական բավարարվածությունը կանխատեսող գործոն:

Ամփոփելով վերլուծությունը եզրակացություն է արվում այն մասին, որ զույգերի հուզական ինտելեկտը կարող է վճռորոշ գործոն հանդիսանալ ամուսնական կյանքին՝ նրանց հարմարման և բավարարվածության գործում:

Ատենախոսության **երրորդ գլուխը՝** վերնագրված "Ամուսնական կյանքին՝ զույգերի հոգեբանական հարմարման և բավարարվածության և հուզական ինտելեկտի փոխադարձ կապի փորձարարական հետազոտություն" նվիրված է բուն փորձարարական հետազոտության նկարագրությանը:

Դրանում ներկայացված են փորձարարական հետազոտության խնդիրները, ընտրախումբը, մեթոդական ապարատը, կազմակերպման պայմաններն ու իրականացման փուլերը, ինչպես նաև հետազոտության արդյունքներում ստացված տվյալները ու դրանց հոգեբանական վերլուծությունը:

Փորձարարական հետազոտության նպատակն է եղել ուսումնասիրել ամուսնական զույգերի հուզական ինտելեկտի մակարդակի, ամուսնական կյանքին նրանց հարմարվածության ու բավարարվածության աստիճանի, զույգերի սեռային պատկանելիության, տարիքի, զույգերի և նրանց ծնողների կրթական մակարդակի միջև առկա փոխադարձ կապերն ու հարաբերությունները, հուզական ինտելեկտի խթանման միջոցով նպաստել ամուսնական կյանքին նրանց առավել հարմարվածությանն ու բավարարվածությանը:

Փորձարարական հետազոտությունը իրականացվել է **երկու փուլով:**

Առաջին փուլում հավաստող կամ արձանագրող գիտափորձի միջոցով իրականացվել է վարկածի փորձարարական հավաստումը, հետազոտական տվյալների ամփոփումն ու արդյունքների հոգեբանական վերլուծությունը:

Երկրորդ փուլում իրականացվել է ձևավորող գիտափորձ (ուսումնական թրեյնինգ), որի նպատակն է բարձրացնել հետազոտվողների հուզական ինտելեկտի մակարդակը:

Հետազոտության կազմակերպման պայմաններն ապահովելուց հետո իրականացվել է հետազոտության ելակետային տվյալների հավաքագրում: Համապատասխան մեթոդների կիրառությամբ ուսումնասիրվել են հետազոտվողների հուզական ինտելեկտի մակարդակը, ամուսնական կյանքին՝ նրանց հարմարման ու ամուսնական բավարարվածության աստիճանը, սեռային պատկանելիությունը, տարիքը հետազոտվողների և նրանց ծնողների կրթական մակարդակները: Իրականացվել է հարցաշարերի միջոցով ստացված տվյալների ամփոփում և հոգեբանական վերլուծություն, որոնք ներկայացված են առանձին աղյուսակներում և գծապատկերներում:

Աղ. 1 Ամուսնական զույգերի տարիքային ցենզի և նրանց հուզական ինտելեկտի, ամուսնական հարմարման և բավարարվածության փոխադարձ կապերը

Փոփոխական	Տարիքային խմբեր (μ±SD)					Վիճակագրական Փորձարկում
	18-22y	23-27y	28-32y	33-37y	≥38 y	
Հուզական Ինտելեկտ	324.93± 37.42	320.03 ± 36.61	336.91 ± 29.07	347.25 ± 39.99	349.43± 29.80	F=6.41 P-value=0.000
Ամուսնական Հարմարում	54.88 ± 13.76	58.02± 18.28	64.30± 19.04	69.13± 18.49	64.31± 16.56	F=4.179 P-value=0.003
Ամուսնական բավարարվածութ	169.64± 29.09	164.19 ± 25.29	176.57 ± 26.66	174.88 ± 26.88	171.90± 31.30	F=1.142 P-value=0.338

Աղյուսակ 1-ում ներկայացվող տվյալների համաձայն, հետազոտվողների տարիքի բարձրացմանը զուգահեռ աճում է նրանց հուզական ինտելեկտի (p<0.001) և ամուսնական կյանքին ՝ զույգերի հարմարման մակարդակը (P<0.05): Ամուսնական բավարարվածության գործոնը տարիքային տարբեր խմբերում փոփոխման օրինաչափ դրսևորումներ չի արձանագրում:

Աղ. 2 Ամուսնական զույգերի կրթական մակարդակի և հուզական ինտելեկտի, ամուսնական հարմարման և բավարարվածության միջև առկա կապերը

Փոփոխական	Կրթության աստիճան			Վիճակագր. փորձարկում
	Բակալավր	Մագիստրա Տուրա	Ասպիրան տուրա	
	(μ±SD)	(μ±SD)	(μ±SD)	
Հուզական Ինտելեկտ	323.00±36.73	339.19±35.45	356.52±22.81	F=13.79 P-value=0.000
Ամուսնական Հարմարում	55.86±16.53	64.50±15.39	69.15±17.56	F=11.25 P-value=0.000
Ամուսնական Բավարարվածություն	165.77±29.81	171.33±26.31	182.94±19.61	F=5.19 P-value=0.006

Աղ. 2-ում ներկայացվող տվյալների համաձայն ամուսնական զույգերի կրթական մակարդակի բարձրացմանը զուգընթաց աճում է նրանց հուզական ինտելեկտը, ամուսնական կյանքին հարմարման աստիճանն (P<0.001) ու դրանից բավարարվածությունը(P<0.01):

Աղ. 3 Ամուսնական զույգերի սեռային պատկանելիության, հուզական ինտելեկտի, ամուսնական հարմարման և բավարարվածության միջև առկա կապերը

Փոփոխական	Սեռ		Վիճակագրական Փորձարկում
	Իգ.	Ար.	
	(μ±SD)	(μ±SD)	
Հուզական Ինտելեկտ	322.44±35.81	341.43±35.22	t= -3.939, d.f= 215 P-value= 0.000, CI= -28.50- -9.49
Ամուսնական Հարմարում	54.89±14.19	64.97±18.45	t = -4.514, d.f= 202 P-value= 0.000, CI= -14.48- -5.67
Ամուսնական բավարարվածութ.	166.31±29.40	173.08±26.70	t= -1.77, d.f= 215 P-value= 0.07, CI= -14.28-0.74

Աղ. 3-ում ներկայացվող տվյալների համաձայն տղամարդիկ համեմատ կանանց ցուցաբերում են ինչպես հուզական ինտելեկտի զարգացվածության, այնպես էլ ամուսնական կյանքին հարմարվածության ($p<0.001$) առավել բարձր մակարդակ: Ամուսնական կյանքից բավարարվածության գործում սեռային պատկանելիության գործոնը վճռորոշ ազդեցություն չունի($P>0.05$):

Աղ. 4 Հետազոտվողների կրթական մակարդակի ազդեցությունը նրանց հուզական ինտելեկտի ասպեկտների վրա

Ցուցանիշ Փոփոխական	Կրթության աստիճան			F	P
	Բակալավր	Մագիստր.	Ասպիրանտո.		
	(μ±SD)	(μ±SD)	(μ±SD)		
Ներանձնային	107.99±14	113.84±11.78	118.57±10.15	2.80	0.000
Միջանձնային	74.86±6.78	77.26±5.09	75.90±5.62	2.80	0.06
Հարմարման	61.77±8.62	63.51±9.20	69.27±6.47	10.32	0.000
սթրեսի կառավարում	36.01±8.75	38.51±8.61	43.18±6.48	9.88	0.000
Տրամադրութ.	46.70±7.11	48.94±6.54	50.09±3.81	4.60	0.011

Աղ. 4 –ում ներկայացվող տվյալների համաձայն հուզական ինտելեկտի ներանձնային, հարմարման, սթրեսի կառավարման և ընդհանուր վարքի ասպեկտները ուղիղ համեմատական է հետազոտվողների կրթական մակարդակի հետ($p<0.001$), այն դեպքում, երբ միջանձնային ասպեկտը այդպիսի օրինաչափ դրևորում չի ցուցաբերում ($p>0.05$):

Աղ. 5-ում ներկայացվող տվյալների համաձայն ամուսնական զույգերի ծնողներից՝ հոր կրթական մակարդակը ուղիղ համեմատական է նրանց հուզական ինտելեկտի զարգացվածության մակարդակին ($p<0.05$), այն դեպքում, երբ մոր կրթական մակարդակի և հետազոտվողների հուզական ինտելեկտի միջև օրինաչափ կապեր չեն արձանագրվում ($p>0.05$): Օրինաչափ կապեր չեն արձանագրվում նաև ամուսնական կյանքին՝ զույգերի հարմարման ու բավարարվածության և նրանց ծնողների կրթական մակարդակների միջև ($p> 0.05$):

Աղ. 5 Ամուսնական զույգերի ծնողների կրթական մակարդակի և հուզական ինտելեկտի, ամուսնական հարմարման և բավարարվածության միջև առկա կապերը

Փոփոխական	Ծնող	Կրթության Աստիճան		Վիճակագր. փորձարկում
		Միջն. դպրոցը չավարտած	Միջն. դպրոցը ավարտած կամ ավելի բարձր	
		(μ±SD)	(μ±SD)	
Զույգերի հուզական Ինտելեկտը	Հայր	325.05± 36.22	337.27±36.30	t= 2.485, d.f= 215 P-value= 0.015 CI= 2.42-22.01
	Մայր	327.07± 34.41	333.85± 37.46	t= 1.220, d.f= 215 P-value= 0.224 CI= -4.17-17.75
Զույգերի Ամուսնական հարմարումը	Հայր	61.59±18.52	57.82±15.11	t= 1.605, d.f= 215 P-value= 0.11 CI= -0.85 - 8.3
	Մայր	61.20±18.00	56.70±14.48	t= 1.90. d.f= 131 P-value= 0.059 CI= -0.16 - 9.16
Զույգերի ամուսնական բավարարվածութ.	Հայր	168.35±28.99	171.50±27.23	t= 0.814, d.f= 215 P-value= 0.416 CI= -10.77 – 4.47
	Մայր	173.52±26.39	168.26±28.83	t= 1.228 d.f= 215 P-value= 0.22 CI= -13.39 – 2.88

Աղ. 6-ում և աղ. 7-ում ներկայացվող ցուցանիշների համաձայն ամուսնական կյանքին զույգերի հարմարման ու բավարարվածության մակարդակը ուղիղ համեմատական է նրանց հուզական ինտելեկտի զարգացվածության մակարդակի ($P=0.000$), դրա ներանձնային, միջանձնային հարմարման, սթրեսի կառավարման և ընդհանուր վարքային ասպեկտների հետ ($p=0.000$):

Աղ. 6 Հուզական ինտելեկտի և ամուսնական կյանքին՝ զույգերի հարմարման ու բավարարվածության միջև համահարաբերակցական կապի գործակիցները

Ցուցանիշ / Փոփոխական	Հուզական ինտելեկտ	
	r	P
Ամուսնական Համապատասխանություն	0.52	0.000
Ամուսնական Բավարարվածություն	0.46	0.000

Աղ. 7 Ամուսնական բավարարվածության և հուզական ինտելեկտի տարբեր բաղադրիչների փոխկապակցվածության գործակիցը

Ցուցանիշ / Փոփոխական	Ամուսնական բավարարվածություն	
	R	**P**
Ներանձնային	0.42	0.000
Միջանձնային	0.21	0.000
Համակերպում	0.41	0.000
Սթրեսի կառավարում	0.38	0.000
Ընդհանուր վարք	0.39	0.000

Աղ. 8-ի տվյալների համաձայն հուզական ինտելեկտի և ամուսնական համակերպման միջև ռեգրեսիան կազմում է 27%:

Աղ. 8:Ամուսնական համակերպման և ամուսնական բավարարվածության ռեգրեսիոն կապը հուզական ինտելեկտի հետ

Ցուցանիշ / Փոփոխական	Հուզական ինտելեկտ	
	(R) Փոխկապակցվածութ. գործակից	(R Square) Կանխատեսման գործակից
Ամուսնական հարմարում	0.526	0.276
Ամուսնական բավարարվածություն	0.462	0.214

Դա նշանակում է, որ հուզական ինտելեկտի հիման վրա կարելի է 27% -ով կանխատեսել ամուսնության համապատասխանությունը: Տվյալները նաև վկայում են,

որ հուզական ինտելեկտի և ամուսնական բավարվածության ռեգրեսիան գրանցվել է 21%: Այս մակարդակը ապացուցում է, որ հուզական ինտելեկտը թույլ կանխատեսող գործոն է ամուսնական բավարվածության մակարդակն իմանալու համար:

Հետազոտության երկրորդ փուլում իրականացվել է ձևավորող գիտափորձ (ուսումնական թրեյնինգ), որի նպատակն է բարձրացնել հետազոտվողների հուզական ինտելեկտի մակարդակը:

Հուզական ինտելեկտի ձևավորմանն ուղղված ուսուցողական դասընթացներին մասնակցելու համար ամուսնացածներից պատահականության սկզբունքով ընտրվել է 60 ուսանող: Սկզբում ընտրված ուսանողները բաժանվել են երկու խմբի՝ փորձարկվող (30 զույգ) և ստուգիչ (30 զույգ): Այնուհետև անցկացվել է երեք թեստ՝ ա) հուզական ինտելեկտի, բ) ամուսնական հարմարման և գ) ամուսնական բավարարվածության: Այնուհետև փորձարկվող խմբի համար իրականացվել են հուզական ինտելեկտին վերաբերող հաղորդակցական հմտությունների ուսուցման դասընթացներ: Դասընթացների ձևաչափը՝ 16 սեանսներ, յուրաքանչյուր սեանսի միջին տևողությունը 4 ժամ, որոնց ավարտին մասնակցող 60 ամուսնացած զույգերը կրկին հանձնել են վերը նշած երեք թեստերը: Վերջում ուսումնասիրվել ու գնահատվել են դասընթացների ազդեցությունը փորձարկվող խմբում, համեմատվել ու վերլուծության են ենթարկվել առաջին ու երկրորդ փուլի թեստերի արդյունքները երկու խմբերում:

Աղ. 9 Ամուսնական բավարարվածության մակարդակը ձևավորող գիտափորձի մասնակիցների և ստուգիչ խմբերում

Վիճակագրական Փորձարկում	Ամուսնական բավարարվածութ.		Խմբեր
	Հետո (μ±SD)	Նախքան (μ±SD)	
t= - 3.47, d.f=29 sig=0.002	176.93±26.31	171.43±30.34	Ձևավորող
t= 3.05, d.f=29 sig=0.005	171.80±29.45	177.36±24.89	Ստուգիչ

Աղ. 9 -ում ներկայացվող տվյալները վկայում են, որ ամուսնական հարմարվածության մակարդակը փորձարկվող խմբում փոփոխություն է արձանագրել ուսուցման շրջանից առաջ և հետո: Այս տարբերությունը վիճակագրական տեսակետից նշանակալի է (P<.001):

Աղ. 10 Ամուսնական հարմարվածության մակարդակը ձևավորող գիտափորձի մասնակիցների և ստուգիչ խմբերում

Վիճակագրական Փորձարկում	Ամուսնական հարմարում		Խմբեր
	Հետո (μ±SD)	Մինչ (μ±SD)	
t= - 4.36, d.f=29, sig=0.000	73.23±10.47	62.26±14.38	**Զևավորող**
t= 1.74, d.f=29, sig=0.09	63.76±20.50	64.26±20.31	**Ստուգիչ**

Աղ. 10 -ում ներկայացված տվյալները վկայում են, որ ամուսնական հարմարվածության մակարդակը փորձարկվող խմբում փոփոխություն է արձանագրել ուսուցման շրջանից առաջ և հետո: Այս տարբերությունը վիճակագրական տեսակետից նշանակալի է (P<.001):

Հետազոտության արդյունքում արվել են հետևյալ **եզրակացությունները.**

1. Ամուսնական կյանքին զույգերի հարմարման ու բավարարվածության մակարդակը ուղիղ համեմատական է նրանց հուզական ինտելեկտի զարգացվածության մակարդակի, դրա ներանձնային, միջանձնային հարմարման, սթրեսի կառավարման և ընդհանուր վարքային ասպեկտներին: Հուզական ինտելեկտի մակարդակի հետազոտության միջոցով կարելի է կանխատեսել ամուսնական զույգերի՝ հարմարման և բավարարվածության մակարդակը:
2. Ամուսնական կյանքին զույգերի հարմարման աստիճանը և նրանց հուզական ինտելեկտի մակարդակն աճում է նրանց տարիքի ավելացմանը զուգընթաց և ամուսնական բավարարվածությունը տարիքի ավելացմամբ պայմանավորված փոփոխման օրինաչափ դրևորումներ չի ցուցաբերում:
3. Ամուսնական կյանքին հարմարման աստիճանն ու դրանից բավարարվածությունը ինչպես նաև հուզական ինտելեկտի զարգացվածությունը նրանց կրթական մակարդակի բարձրացմանը զուգընթաց աճման միտում է ցուցաբերում: Հուզական ինտելեկտի ներանձնային, հարմարման, սթրեսի կառավարման և ընդհանուր վարքի ասպեկտներն ուղիղ համեմատական են հետազոտվողների կրթական մակարդակի հետ, այն դեպքում, երբ միջանձնային ասպեկտն այդպիսի օրինաչափ դրևորում չի ցուցաբերում:
4. Տղամարդիկ՝ ի տարբերություն կանանց, ցուցաբերում են ինչպես հուզական ինտելեկտի զարգացվածության, այնպես էլ ամուսնական կյանքին հարմարվածության առավել բարձր մակարդակ: Ամուսնական կյանքից բավարարվածության գործում սեռային պատկանելիության գործոնը վճռորոշ ազդեցություն չունի:
5. Ամուսնական զույգերի ծնողներից՝ հայրերի կրթական մակարդակն ուղիղ համեմատական է հետազոտվողների հուզական ինտելեկտի զարգացվածության

մակարդակին, այն դեպքում, երբ մայրերի կրթական մակարդակի և հետազոտվողների հուզական ինտելեկտի միջև օրինաչափ կապեր չեն արձանագրվում: Օրինաչափ կապեր չեն արձանագրվում նաև ամուսնական կյանքին՝ զույգերի հարմարման, բավարարվածության և նրանց ծնողների կրթական մակարդակների միջև:

6. Հուզական ինտելեկտի հիման վրա հաղորդակցական հմտությունների ուսուցման ծրագրերը և ուսուցողական դասընթացները կարող են ազդեցություն գործել ամուս-նական բավարարվածության տարբեր բաղադրիչների վրա: Ուսուցողական դասընթացների իրականացումը կարող է նպաստել փորձարկվողների ամուսնական բավարարվածության մակարդակի բարձրացմանը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հրատարակած հետևյալ աշխատանքներում.

1- Նադեր Զաֆարիբալալամի ,The Essence of Emotional intelligence and its funcions Հոգեբանություն և կյանք,2011. 3 (4). Երևան, Հայաստան:

2- Նադեր Զաֆարիբալալամի, Էմոցիոնալ ինտելեկտի էությունը և գործառույթը, Կանթեղ-Գիտական Հոդվածներ ,2012. 3 (52). Երևան, Հայաստան:

3- Նադեր Զաֆարիբալալամի, Ռ.Հ. Պողոսյան, Demographic variables effect on Emotional intelligence and marital satisfaction.Տեսական և կլինիկական բժշկության հարցեր (Գիտագործնական հանդես),2013. 4 (80). Երևան, Հայաստան:

Надер Джафарибалалами

Взаимосвязь эмоционального интеллекта с удовлетворенностью от супружеской жизни

Диссертация на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.01 – “Общая психология, теория и история психологии, психология личности”.

Защита диссертации состоится “17” июня, 2014г. в 12.00 на заседании специализированного совета философии и психологии 064 ВАК по присуждению ученых степеней при Армянском Государственном Педагогическом Университете им. Х. Абовяна, по адресу: 0010, Ереван, ул. Тиграна Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность темы: Развитие института семьи обусловлено разными и многочисленными социальными, правовыми, религиозными, психологическими, этническими и другими факторами. В числе изучаемых психологических факторов, обуславливающих адаптацию супружеских пар к семейной жизни, особое значение в науке придается эмоциональному интеллекту. Ряд исследователей (Голман, Торндайк Р., Пиаже Ж., Кенон и др.) эмоциональный интеллект рассматривают как умение индивида соотносить друг с другом смыслы эмоций, рассуждать о них и с их помощью разрешать насущные проблемы жизни. Следует к этому добавить также, что исследователи специально выделяют органическую связь эмоционального интеллекта с конструированием межличностных отношений, эмоциональной адаптацией, коммуникативными способностями, умением понимать других и т. д. При этом актуальным является изучение и выявление психологических причин, механизмов, закономерностей, лежащих в основе адаптационного процесса к семейной жизни и удовлетворённости ею супружескими парами. Важным считаем также установление психологической диагностики преодоления и предупреждения трудностей, возникающих в процессе достижения удовлетворённости супружеских пар семейной жизнью.

Гипотеза исследования: Предполагается, что уровень развития эмоционального интеллекта супружеских пар находится в позитивной соотносимости с уровнем их адаптивности и удовлетворённости семейной жизнью. В качестве мощного фактора, воздействующего на удовлетворенность и адаптацию к семейной жизни важную роль играет уровень образованности супружеских пар и образованность их родителей, половая принадлежность супругов, их возраст.

Цель исследования: выявить связь между эмоциональным интеллектом и супружеской жизнью, между адаптированностью и удовлетворённостью супружеских пар. Целью исследования исследования является также изучение роли образовательного уровня и половой принадлежности супругов в удовлетворённости и адаптированности семейной жизни.

Задачи исследования:

1. На основе анализа разных психологических взглядов и подходов выявить суть и содержание понятий “адаптированность” и “удовлетворённость” семейно-супружеских пар;
2. Посредством сопоставления вышеотмеченных понятий показать взаимоотношения между удовлетворённостью семейной жизнью и адаптированностью к ней и уровнем эмоционального интеллекта супружеских пар;
3. Посредством экспериментального исследования выявить актуальные связи и взаимоотношения между уровнем эмоционального интеллекта супружеских пар и уровнем их удовлетворённости и адаптированности семейной жизнью, а также между уровнем их образованности и образованности их родителей;
4. Посредством формирующего эксперимента способствовать развитию эмоционального интеллекта исследуемых в целях совершенствования адаптивных механизмов к супружеской жизни и удовлетворённостью ею.

Научная новизна исследования: Впервые делается попытка анализа эмоционального интеллекта в соотношении с удовлетворённостью и адаптацией к супружеской жизни. Анализ взаимодействия этих переменных придает исследованию целостный характер, ибо охватываются при этом разные стороны и грани эмоционального интеллекта и взаимоотношений между супругами. При рассмотрении вышеотмеченных переменных в их единстве еще четче вырисовываются границы и особенности факторов, воздействующих на взаимоотношения супругов. При этом более совершенствуется глубина исследования данной проблемы и проливает свет на предшествующие исследования.

Теоретическая значимость исследования: исследование углубляет понимание и роль и значение эмоционального интеллекта в процессах адаптации к семейной жизни и удовлетворении ею. При этом раскрывается и обосновывается роль чувственно-эмоциональных умений и то, как, каким образом эмоциональный интеллект обеспечивает продуктивность брачно-семейной жизни.

NADER JAFARIBALALAMI

INTERRELATION BETWEEN SATISFACTION IN THE MARRIED LIFE AND EMOTIONAL INTELLIGECE

Dissertation thesis for the degree of candidate of psychological sciences

Area of specialization: 19.00.01 - "General psychology, theory and history of psychology, personality psychology"

The dissertation defense will be held on “17” June 2014, at 12:00 at the meeting of Armenian State Pedagogical University after Kh. Abovyan during the session of the working HCC Philosophy and psychology 064 specialized council

Address: 0010, 17 Tigran Mets str., Yerevan.

SUMMARY

Vitality of the theme:

Development of the family Institute is stipulated by different and many social, legal, religious, phycological, ethnic and other factors. Emotimal intellect is a subject of special attention in the row of the investigated psychological factors stipulating adaptation of spouses to married life. A number of investigations (Goleman D, Thordike E.L, Piaget J, Canon and others) consider the emotional intellect as capability of an individuum to correlate senses of emotions, to speculate about them and solve vital life problems with the help of them.

It should be added that the investigators especially separate organic bond of the emotional intellect with building of personal interrelations, emotional adaptation, communicative capabilities, ability to understand others etc. Investigation and revealing of psychological reasons, mechanisms and regularities lying in the basis of the adaptation process to family life and satisfaction of the spouses is of utmost vitality. We consider it very important to define psychological diagnostics of overcoming and prevention of difficulties arising in the process of getting satisfaction of the spouses in married life.

Hypotesis of the investigation.

It is supposed that level of intellectual development of spouses is in the positive correlation with the level of their adaptation and satisfaction in family life. As the very powerful factor affecting satisfaction and adaptation to family life the level of education, education of their parents, sexial belonging of the spouses and their age play a very important role.

Objective of the investigation:

1. To reveal essence and content of the notions “Adaptation” and “satisfaction” of family couples on the basis of analyses of different psychological outlooks and approaches.

2. With the help of comparison of the highly-mentioned notions to show interrelations between satisfaction in family life and adaptation to it and level of emotional intellect of the spouses.
3. With the help of experimental investigation to reveal actual bonds and interrelations between the untellectual levels of the spouses and level of their satisfaction and adaptation in family life as well as between the level of the education and education of their parents.
4. With the help of forming experiment to facilitate development of the emotional intellect of the investigated persons with purpose of improvement of adaptive mechanisms to married life and satisfaction in it.

Scientific novelty of the investigation.

It is the first time there has been done an attempt to analyse emotional intellect in correlation with satisfaction and adaptation to married life. Analyses of these variables gives the investigation an integral character to the investigation as far as it envelopes different aspects and edges of emotional intellect and interrelations of spouses. When considering the higly-cited variables in their unity there are more clearly outlined boundaries and peculiarities of the factors affecting interrelations of spouses, the depth of the investigation of this issue being improved greatly and it illustrates the preceding investigations.

Theoretical importance of the investigation:

The investigation deeepens understanding and role and importance of emotional intellect in the process of adaptation to married life and satisfaction with it, the role of sensitive and emotional abilities being revealed and founded and the issue how the emotional intellect provides productivity of married life is explained.